ԱՐՄԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Ծնվել է 1973թ. նոյեմբերի 22-ին, Երևանում:

Կրթությունը՝

1990-1995թթ. Գլաձոր կառավարման համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, միջազգայնագետ-պատմաբանի որակավորում

1999 և 2001թթ. Մասնագիտական վերապատրաստման ծրագրեր՝ Ջորջ Մարշալի անվան Անվտանգության ուսումնասիրությունների եվրոպական կենտրոն, Գերմանիա և ՆԱՏՕ-ի պաշտպանության քոլեջ, Հռոմ, Իտալիա

2000թ. Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց, Թաֆթսի համալսարան, Բոստոն, ԱՄՆ

Աշխատանքային գործունեություն՝

2018թ. նոյեմբերի 28-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Ավստրիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Վիեննա)

2018թ. հունիսի 8-ին ՀՀ վարչապետի որոշմամբ վերանշանակվել է ԱԳ նախարարի տեղակալ,

2016թ. հունիսի 22-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ,

2011-2016թթ. Եվրոպայի խորհրդում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Ստրասբուրգ),

2016թ. Եվրոպայի խորհրդի Ծրագրերի, բյուջեի և աշխատակազմի հարցերով զեկուցողների խմբի (կոմիտեի) նախագահ,

2013թ. Եվրոպայի խորհրդի Նախարարների պատվիրակների նախագահ,
2011թ. ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության խորհրդական,

2007-2011թթ. ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական - ՀՀ մշտական ներկայացուցչի տեղակալ,

2005-2007թթ. ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչություն սովորական սպառազինությունների վերահսկման բաժնի վարիչ,

2002-2005թթ. Շվեյցարիայում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար,

2002-2005թթ. ժնևի ՄԱԿ-ի գրասենյակում ՀՀ մշտական ներկայացուցչության երկրորդ քարտուղար, ժնև, Շվեյցարիա,

1999-2002թթ. ԱԳՆ սպառազինությունների վերահսկաման և միջազգային անվտանգության վարչություն ՆԱՏՕ-ի հետ համագործակցության բաժնի երկրորդ քարտուղար,

1997-1999թթ. ՀՀ ԱԳՆ ռազմաքաղաքական վարչության երկկողմ ռազմական համագործակցության բաժնի կցորդ, այնուհետև երրորդ քարտուղար:

Դիվանագիտական աստիճանը՝

Արտակարգ և լիազոր դեսպան:

Օտար լեզուների իմացություն՝

Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

2019թ. հունվարի 11-ի ՀՀ նախագահի որոշմամբ նշանակվել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության առաքելության ղեկավար, Վիեննայում Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակում և այլ միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Վիեննա):